

logique», par le réalisme cru et vécu de l'expérience de l'être et d'être homme. L'A. discerne trois niveaux ou phases, d'ailleurs intimement liés et communicants, dans l'introspection psychologique d'Augustin (pour le sent du «psychologique» voir le résumé de la partie antérieure).

La première phase est celle de l'introspection *psychique* qui englobe toute la réalité psychique de l'homme — instincts, poussées, émotions, appétits, passions, connaissance, sensations, sensibilité, affections, amour, réactions etc. — tant dans leurs manifestations naturelles jusqu'aux élans mystiques. La deuxième phase, que l'A. appelle *phénoménologique*, vise la subjectivité humaine non plus par rapport à certains mouvements ou états intérieurs, mais dans sa réalité même de sujet au delà de toute connection avec des dispositions et des attitudes particulières. Le sujet humain y est dans l'enjeu en tant que tel dans toute l'ampleur de ses dimensions et de ses relations immanentes et transcendentes, dans ses options fondamentales à l'égard de l'être et de ses valeurs. L'homme est envisagé, donc, ici dans cette *intentionnalité* essentielle à sa structure ontologique qui lui rend possible le dépassement de soi-même par la connaissance et l'amour. L'A. ne manque pas d'indiquer ici les analogies de la pensée d'Augustin avec les courants phénoménologiques récents et surtout de relever, suivant Landgrebe, la priorité du *Toi* divin par rapport au *moi* humain: ce pivot portant de la métaphysique augustinienne dont la redécouverte — bien qu'elle soit conçue en termes d'une intersubjectivité humaine — par la phénoménologie moderne est considérée par Landgrebe comme le retour de la philosophie occidentale à son essence la plus pure. La troisième phase de l'introspection augustinienne est définie par l'A. comme métaphysique-transcendentale. Transcendentale, car elle cherche à dévoiler les réalités dernières ou les principes qui sont à la base même de la possibilité pour l'esprit humain de se connaître soi-même et de connaître Dieu: la *memoria sui* et la *memoria Dei*. Métaphysique, car il ne s'agit pas de pures formes subjectives ou de formes du sujet connaissant vides de contenu objectif, mais de réalités indépendantes de la réflexion du sujet pensant qui ne fait que les exposer à la lumière, à l'acte réfléchi.

L'A. conclut cette partie de son travail en soulignant encore l'originalité de l'apport augustinien à la pensée philosophique. Il rappelle, à cet égard, le jugement de K. Jaspers qui considère Augustin, à côté de Platon et de Kant, rien moins que comme l'un des trois grands fondateurs créatifs de cette pensée.

Հ. ԼԵԻՈՆԴ ԱԼԻՇԱՆ

ՏԵՍՈՒՉ ՓԱՐԻՋԻ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

(Շաբ. տե'ս «Բազմավեպ» 1978, ք. 3-4, էջ 380-410)

ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՎԱՐԺԱՐԱՆԵՆ ՆԵՐՍ

1858ին Ալիշան կը մտնէր Մուրադեան վարժարան: Նախապէս՝ 1851ին եւ 1853ին արդէն իսկ տեսած էր վարժարանը, եւ կազմած անձնական կարծիք՝ թէ չէնքը անյարմար էր վարժարան մը ըլլալու. իբր վարժարան շինուած չըլլալով՝ շատ մը մասեր յարմարացուած էին. թողունք որ չէնքն ալ կը կրէր վրան հնութեան դրոշմը եւ կարօտ էր շարունակական նորոգութեան: Տեսնենք նորոգութիւնները կամ նորոգութիւնները՝ որ կատարուած են Ալիշանի օրերուն, նորոգութիւնները՝ որոնք անհրաժեշտ նկատուած էին, ու տեսուէր՝ հակառակ տնտեսական տաղնապալից կացութեան՝ ստիպուած էր ձեռնարկել անոնց, հոգալ ու մաշիլ:

Ալիշան՝ տակաւին տեսուէ իսկ շանուանուած՝ հարկը կը տեսնէ նորոգել տալու աշակերտներուն զբօսավայրը, բաւական մեծ դահլիճ մը. ասոր կը յաջորդեն շինարարական մանր ձեռնարկներ ալ, գըլ-խաւորաբար՝ առողջապահական, որոնք անհրաժեշտ կը նկատուէին. այսպէս՝ «խորհիմք տալ շինել եւ ջեռարան մատրան եւ սեղանատան, մի մեքենայ՝ վասն երկոցուն միանգամայն, զի որմնակից են»¹⁶⁹: Ապա կը խորհի շինել տալ փոքրիկ հիւանդանոց մը, որովհետեւ ձմեռ ատեն աշակերտները հիւանդանալով, ցուրտէն անպատասպար կը մընան՝ իրենց սենեակներուն մէջ. այս ծրագիրը իրագործելէ առաջ՝ «նախ տուաք սիրիդս պատրաստել վասն սենեկաց, զի ցարդ չէր լեալ այդ սովորութիւն, եւ ցրտահար տառապէին մանկունքն»¹⁷⁰: Ծրա-

169. Ալիշան Հ. Դ. Փարիզէն, 21 Դեկտ. 1858, առ Արքահայր Գէորգ Հիւրմուզեան, Վենետիկ:

170. Անդ:

լիջան կու տայ խնդրուած յանձնարարականը¹⁹⁷ եւ Փրանսացի գիտնականը անով կը ներկայանայ Ս. Ղազար, ուր «հարեւանցի եւեթ տեսեալ զգրչագիրս մեր»¹⁹⁸, կը փափաքի անդամակցել Ս. Ղազարի ձեմարանին. նման խնդրանք կը ներկայացնէ նաեւ Ռենոտի համար, որ Փարիզի Ասիական Ընկերութեան նախագահն էր: Լանկլուայի փառիքին ընդառաջելով՝ Վենետիկի Հայրերը կը նուիրեն ձեմարանին Վկայականը նաեւ Ռենոտի, «զոր բերեալ ընդ իւր այդր (ի Փարիզ), կը գրէ Աբրահայրը Ալիշանի, եւ ընդ քեզ երթեալ՝ մատուցիլ զայն առ այրն մեծարոյ»¹⁹⁹: Սակայն, Լանկլուայ Ալիշանէն աւելի ճարպիկ կը գտնուի, եւ առանց յարգելու դրուած պայմանը, անձամբ կը տանի Ռենոտի Վկայականը, ցոյց տալու անշուշտ իր անձնական ճարտարութիւնը. «այդպիսի ոմանք են ճարտարքս դադղիացիք իրահամարձակք եւ զայլոցակերք. որով աւելորդ է ինձ արդ երթալ առ Ռենոտ, զի նուաստութիւն համարիմ յայտմ առթի, մանաւանդ զի արդէն Պ. Հ. Սուքիաս տեսաւորեալ է ընդ նմա ի մատենադարանին եւ շնորհաւորեալ»²⁰⁰:

4.— 1859—1860 տարիներու նամակներուն մէջ, ցանցառ կերպով կը գտնենք ակնարկներ նկատմամբ իր անձնական աշխատանքներուն. ու չէ կարելի կռահել թէ շարունակական կերպով ի՞նչ եղած է իր գիտական զբաղումը: 1858ի Նոյեմբերին, Հ. Ռափայէլի մահէն առաջ, Ալիշան կը գրէ Հ. Ներսէս Սարգիսեանին, խնդրելու համար անոր ականատեսի տեղեկատուութիւնները, որովհետեւ «գտեալ երբեմն պարապ յայլ գործոց, ձեռն արկանեմ յառաջ վարել զմեծ տեղագիր Հայաստանեայց, այսինքն՝ զաշխարհագրութիւնն իմ»²⁰¹: Հ.

197. Թանձնարարական նամակին պարունակութիւնը հետեւեալն է. «Մատուցող թղթոյս է Պ. Վիկ. Լանկլուայ, ծանօթ հայադիտութեամբ եւ հրատարակութեամբ պէսպէս դրամարանական գրոց եւ ուղեւորութեանն ի կիւլիկիւ. եւ գայ այդր ի քնին գիւտնաց քաղաքիդ Վենետիկոյ եւ ձեռագիր մատենից մերոց մենաստանիս: Իմաստութեամբ Վեհիդ մատակարարեսցի նմա արժանն, յանձնելով ի խնամս վերակացուաց մատենադարանիս, վրամ որոյ եւ պատշաճ դատիցի. համբուրիւ...» (6 Մայիս 1861, առ Ա. Գ. Հ. Վենետիկ):

198. Հիւրմիւզեան Աբրահայր, Վենետիկէն, 8 Յունիս 1861, առ Հ. Ղ. Ալիշան, Փարիզ: Նոյն այս նամակին մէջ, հետեւեալ ծանօթութիւնը կը տրուի հայագէտին մասին. «Լանկլուայ եկն եհաս ի քաղաքս, եւ զաւուրս ութ միայն կացեալ եւ հարեւանցի եւեթ տեսեալ զգրչագիրս մեր, որպէս եւ ի գիւտն Աի Ֆրարեայ երթեալ մի անգամ, երէկ մեկնեցաւ ի քաղաքէս, երթալ ի Պօլոնիայ, ի Ֆերրարայ եւ այլուր, եւ մինչեւ ի 20 ամսոյս դառնալ այդրէն. Թուի այլով ինչ խորհրդով առնել նմա զայս ուղեւորութիւն, բայց մեք պատուեցաք զնա որպէս եւ մարթն էր»:

199. Հիւրմիւզեան Աբրահայր, Վենետիկէն, 8 Յունիս 1861, առ Հ. Ղ. Ալիշան, Փարիզ:

200. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 1 Յունիս 1861, առ Ա. Գ. Հ. Վենետիկ:

201. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 20 Նոյեմբ. 1858, առ Հ. Ներսէս Սարգիսեան, Վենետիկ:

Ռափայէլի մահէն ետք, ամբողջ 1859 տարեւան ընթացքին, կը կորսնցնենք ամէն հետք, որովհետեւ կը թաղուի տնտեսական եւ մատակարարական գործերու մէջ²⁰², եւ երբ Պոլիսէն իրեն դատունկեր Հ. Բարսեղ Մարտիրոսեան կը խնդրէ իրմէ Պոլիս վախճանող վաստակաւոր եւ խոստովանող Հ. Սրապիոն Պուրիսեանի համար տապանագիր մը, Ալիշան կը պատասխանէ՝ թէ «գրապանագիր Վ. Հ. Սրապիոնի ծերունւոյ հանգուցելոյ կատարեցից ըստ կարի, թէեւ վաղու թողեալ եմ զքերթողութիւն»²⁰³: Բանաստեղծութենէն խորհրդաւոր հրաժարումէ մը ետք, այժմ ալ թաղուած տեսչական ու անտեսական գործերու մէջ, Ալիշանի համար հոգեկան պայքար մըն է՝ քնարը ձեռք առնել կրկին: Վենետիկէն Հ. Համազասպ Թերճի-մանեան, «Բազմավէպ»ի խմբագիրը, առանց տեղեակ ըլլալու Ալիշանի հոգեկան պայքարներուն եւ կրած ներքին տաղանայնորուն, կը խնդրէ իր ալ օժանդակութիւնը «Բազմավէպ»ի համար. այդ առիթով Ալիշան կը մատնէ ինքզինքը ըսելով. «Վասն աղգային կամ հայկական քանից՝ ջանացայց յաղթել տառամտութեանս, զի ոչ աշխնց՝ եւ ոչ երազութիւն առաջին առնթեր կան ինձ, մանաւանդ թէ ի խորս իմ»²⁰⁴: Նոյն տարուան (1859) Դեկտեմբեր 9ին, Աբրահայր գրքուած նամակէն կ'իմանանք թէ տեղագրական գործը ակսած է ձեռք առնել. «յամեցի փոքր մի առ պատասխանի շնորհելուդ ի 26 սահելոյն, փոքր մի յաշխարհագրական սովորութիւնս զբաղեալ», ինչ որ պիտի շարունակէ յաջորդ տարուան ընթացքին: Հ. Ներսէս Սարգիսեան, Վենետիկէն հաղիւ կը լսէ Ալիշանի գործի յծուիլը, իսկոյն նամակով մը վրայ կը հասնի՝ հարցնելու թէ աշխատանքները ո՞ր կէտին վրայ են: Ալիշան չէր կրնար քան մը ծածկել իր սիրելի «պապա»յէն, որուն հանդէպ ունի յատուկ պաշտամունք, եւ ամէն նամակի դրկած է անոր «ողջոյն եւ բաղում անգամ ողջոյն (...) պապա Հօր մերոյ Ներսիսի»²⁰⁵: Արդ, «պապա» Ներսէսն է իրեն հարցնողը,

202. Միակ ակնարկ մը կը գտնենք առ Գերպ. Եղուարդ Հիւրմիւզ (Հոռոմ) ուղղած 2 Յունիս 1859 թուակիր նամակին մէջ, ուր կը խնդրէ ստանալ Անտոնեան Միաբանութեան ձեռագիրներու յիշատակարանը, վանքին մեծաւոր Հ. Արսէն Անճարակեանի միջնորդութեամբ. գիտենք որ յաջորդաբար յաջողած է ընդունիլ:

203. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 31 Հոկտ. 1858, առ Հ. Բարսեղ Մարտիրոսեան, Պոլիս: Վախ մը ետք՝ Ալիշան վը զրկէ տապանագիրը, գրելով «առ արդոյ եւ սիրեցեալ Հայր Բարսիլէ. Գրեցի արձանագիր ինչ չիրմի Հ. Սրապիոնի, տե՛ս որպէս թուի. քառասուն ամ հզի հոգեւոր վաստակոցն, ոչ գիտեմ թէ արդարեւ ա՞յնքան իցեն ամբ քարոզութեանն. այլ որպէս ինձ թուեցաւ» (17 Նոյեմբ. 1858): Տապանագիրը յաջորդաբար անցած է Ալիշանի Նուագներուն Տնօրէնի բաժինէն ներս (հտ. Ե. 1886, Բ. տպ. էջ 162):

204. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 11 Ապրիլ 1860, առ Հ. Համազասպ Թերճիմանեան, Վենետիկ:

205. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 21 Յունիս 1858, առ Հ. Աբրահայր Ճարեան, Վենետիկ:

իրմով հետաքրքրուողը, որուն կը պատասխանէ. «Հարցանես զիմոյս Հայաստանէ թէ յո՞ր ժամանեալ իցեմ վայր. եւ ես յորժամ հարցանեմ զիս՝ գառաչեմ, զի ոչ յառաջեմ. նախ՝ վասն սղութեան ժամանակի, որով աստ երկուս միայն նահանգս՝ զՄոկաց եւ զԱղձնեաց հազիւ կարացի տեղադրել, նախագիծ. եւ երկրորդ՝ զի կոյր աչօք չըջիմ, այսինքն՝ ի գիրս միայն թարթափելով, եւ յար մաշիմ ըղձիւք ակնանատես լինելոյ վայրացն եւ կենդանացուցանելոյ զնկարսն, ապա թէ ոչ՝ մեռելանկար իցէ գրուածն եւ ոչ կենդանանկար. զաշխոյժ մտացս զոհեալ յաշխարհադրական յաճմունս՝ զգամ զցամաքովիւն վաստակոյս, զոր միայն տեսութիւն տեղեացն մարթի վայելչացուցանել որպէս արժանն է. եւ զի մի՛ ի սպառ յուսահատ եւ ձեռնթափ եղէց յապայն՝ յեղերաց Հայոց սկսեալ եմ զտեղադրին, զմիջնաշխարհն զցանկալի յիշատակաց վայրս թողեալ յղկինս: Արդ՝ աշխարհք տեղադրեալն առ յինէն որ շատ որ սակաւ յերկարութեամբ, են Դ. Հայք (որ կարօտի նոր ձուլման), Բարձր Հայք, Խաղտիք, Տայք, Գուգարք, Ուտի, Արցախ, Փայտակարան, Աղուանք եւ սահմանակից կովկասեան դաւառք՝ որք ի Կազբիականն կոյս, Մոկք, Աղձնիք: — Մնան ի նկարագրութիւն յեղերականացն Կորճայք, Պարսկահայք եւ Ատրպատական եւ միջնաշխարհն համօրէն՝ Տուրքիան, Վասպուրական, Սիւնիք եւ Այրարատ, եւ արտաքոյ սոցա ամենայն փոքր Հայք, Կիւլիկիա եւ Միջագետք Հայոց, զորս թէ նովին ոճով կամիցիմ տեղադրել՝ նահապետական կարօտիցիմ կենաց, վասն որոյ հաւանեալ եմ թողուլ այլոմ Հ. Ղեւոնդեայ. իսկ ես համարեցայց զիս նոր եւ վերստին եկեալ յաշխարհ՝ եթէ աւարտեալ կամ լքեալ զառաջարկեալս գործ, իբրեւ վէճ ի սրտադրանցս թաւալելով, փոքր մի եւս եւ ոճով ինչ խորհեցայց զաշխարհէն՝ յոր միայն անշուշտ եւ աներկբայ զնալոց եմ»²⁰⁶:

206. Ալիշան, Հ. Ղ. Փարիզէն, 12 Յունի. 1860, առ Հ. Ներսէս Սարգիսեան, Վենետիկ: Վենետիկէն՝ Հ. Բառնարաս Թսայեան նամակով մը կը հարցնէ Ալիշանի վարժիքը, Անիի արձանագրութիւններէն մէկուն ընթերցումին մասին, թէ արդեօք պէտք է կարդալ ԲԾԹ կամ ՆԾ. Ալիշան կու տայ իր կարծիքը՝ գրելով. «Ձամենայն հարցուածս Պրոսպայ ոչ վարժեմ լուծանել, մանաւանդ զի չեմ արարեալ մանր քննութիւն յարձանս Անուոյ. ցարդ յեղերս եւ ոչ ի կեդրոն յաճեալ աշխարհիս մերոյ՝ տեղագրութեամբս» (12 Յունի. 1860, առ Հ. Բ. Եսայեան, Վենետիկ): — Հիւրմիւզեան Արքահայրն ալ Ալիշանի վրայ ունեցած մեծ համարումին համար, կը հարցնէ ստէպ անոր կարծիքը, մանաւանդ՝ գիտական նիւթերու մասին. այսպէս, Բագրատունիի թարգմանած Միլտոնի «Կորուստ դրախտի» գրքին տպագրութենէն առաջ՝ կը գրէ Ալիշանի. «Ձեռք թարգմանութիւն Միլտոնի վամէաք ընծայել թաղուհոյն Բրիտանիոյ եւ ձեռամբ Հիթի ընկալաք զհաճութիւն նորա, եւ խորհիմք տպագրել ի հայ եւ Անգլ. ալ ոմանց շատ համարի տպագրել միայն ի հայ. Ձեզ ո՞րպէս թուիցին» (19 Օգոստ. 1860): Ալիշան ծածկելով իր անձը ու ներկայացնելով իր աշխատակիցներու կարծիքն ալ, կը պատասխանէ. «Ոչ անհաճոյ թուեցաւ

5. — Ալիշանի գրական կեանքին մասին խօսած ատեննիս, կարեւոր կը համարինք ակնարկ մը տալ իր օրերուն՝ Փարիզ հրատարակուած օրագրին, որոյ խմբագրին հետ ունեցած է որոշ յարաբերութիւններ. «Հայ Ոսկանեան սկսանի հրատարակել օրագիր մի 15օրեայ, քառաթուղթ, յԱրամայ տպագրատան, կծանելով գիրճիկ եւ զիւրեքնեանս. իսկ առ մեզ թեւակոխէ եւ բաղձանս ցուցեալ է դալոյ ի տեսութիւն»²⁰⁷: Այսպէս կը գրէ Ալիշան, 1859ի Յունուարին, բնականաբար սրտի երկիւղով մը, որովհետեւ պիտի չհաճի Ոսկանեանի այցելութիւններէն, «զի մի՛ կամակէցք նորա երեւեցուք»²⁰⁸: Հիւրմիւզեան Արքահայր կը գովէ Ալիշանի բռնած խոհեմ դիրքը ու կը փափաքի գոնէ օրինակ մը ունենալ լոյս տեսած երկչաբարթութեթէն, որպէսզի պահուի Ս. Ղազարի դարաւոր հաւաքածոյին մէջ: Ալիշան բարեկամներու ձեռքով միայն կը տտանայ նորատպ «Արեւմուտք» թերթը, եւ պարբերաբար կը ղրկէ Ս. Ղազար, մեծապէս ուրախանալով որ լրագրին հեղինակն ալ կը մտածէ իրեն նման, այսինքն «հեղինակն խոհեմացեալ ինքնին յայտ մասին ասացեալ՝ «է չգալ մեզ ի տեսութիւն, զի մի՛ առիցեն մեղադրեալն ի նմանէ, ի մէջն առնուլ գրգռումն»²⁰⁹: «Արեւմուտք» չի գտներ պէտք եղած ընդունելութիւնը, եւ շուտով կը տարածուի լուրը՝ թէ Պոլիսէն շատ մը ազգայիններ ետ դարձուցած են լրագիրը, հրաժարելով բաժամը նորագրութենէն, եւ թէ բարեկամներ ու մտերիմներ յորդորած են խմբագիրը՝ մեղմել գրիչը, այլ «չառնու յանձն»²¹⁰: Ալիշան շատ մեծ խմբագրութեամբ հեռու մնացած էր թէ՛ թերթէն եւ թէ՛ խմբագիրէն, գիտնալով որ նման թերթ մը օգտուէ աւելի վնաս կրնայ սերմանել իր շուրջը. եւ իրապէս, ճիշդ թիւին մէջ չարաչար կը յարձակի Տէր Գաբրիէլ Այվազովսկիի վրայ, եւ լուր կը տարածուի՝ թէ խմբագիրը ի վնասաց կաշառեալ իցէ»²¹¹: Ս. Ղազարի միաբանները

եւ աստ՝ տպագրութիւն բնագրին Միլտոնի, այլ էս խիթամ ի ստուարութենէ մատենին, գուցէ ոչ լիցի դիւրատար եւ գրպանելի. բայց թէ ուրոյն տպագրեսցի եւ թարգմանութիւնն» (29 Օգոստ. 1860):

207. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 28 Յունի. 1859, առ Ա. Գ. Հ. Վենետիկ:

208. Անդ: Այս առթիւ, Ալիշան տեղեկութիւն կու տայ՝ թէ «տպագրեալ էին նոքա զպատմութիւն վերադարձի Ձորքորդի ուրումն Խորխոռունի անուանելոյն, ամենեւին անբնա եւ պտգալի» (Անդ):

209. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 14 Փետր. 1859, առ Ա. Գ. Հ. Վենետիկ: Ս. Ղազարի վարդապետները երբ կը տտան «Արեւմուտք»ի գանազան թիւերը, բնականաբար կը տարակուսին՝ թէ կարենայ շարունակուիլ անոր հիմնադրութիւնը: Հիւրմիւզեան Արքահայր կը գրէ. «Ոչ գիտեմ որպէս երեւեցի ազգայնոց չկարծեմ թէ այսու ոճով կարացէ հանապազորդել դարձեալ օրագիրը» (19 Փետր. 1859, առ Հ. Ղ. Ալիշան, Փարիզ):

210. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 27 Փետր. 1859, առ Ա. Գ. Հ. Վենետիկ:

211. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 22 Մարտ 1859, առ Ա. Գ. Հ. Վենետիկ:

անալոգիալ կը լսեն այս լուրը, առանց վաւերացնելու Ոսկանեանի դործելակերպը, որ «արդարեւ թոյնք իժից են ի ներքոյ շրթանցն, որում պահեսցի դմեզ Տէր չլինել հաղորդ եւ մասնակից, թող թէ կաշառք եւս արկանել զանձինս ընդ դատաստանաւ»²¹²:

6.- Փարիզի մէջ է որ սկսի Ալիշանի առաջին ծանօթութիւնը՝ Խրիմեան Հայրիկի հետ, երբ այս վերջինս առաջնորդ էր Վարադայ վանքին: Ծանօթութիւնները ուղղակի եւ անձնական չեն, այլ Պոլիսէն՝ Սերովբէ Ալիշանն է որ նամակներով կանոնաւորաբար կը հաղորդէ լուրերը իր եղբոր, կը ղրկէ նաեւ Վարադայ թերթը՝ «Արծիւ»ը: 1858ի Օգոստոս 25ին, Սերովբէ կ'իմացնէ Ալիշանի թէ «տապա-գիր եւ օրագիր հատատառող Արծիւ Խրիմեան Մկրտիչ վարդապետին նամակագիր բարեկամին յանձնեցինք, եւ արդէն դրուեցաւ որ հոգ տանի եւ գնէ ելած բաներէն, մանաւանդ սեպագիր գրութիւնք»: Քանի մը ամիս ետք՝ Խրիմեան ուղղակի յարաբերութեան մէջ կը մտնէ Սերովբէի հետ, չունենալով համարձակութիւն դրելու Ալիշանին, ու Սերովբէին կը յայտնէ Ալիշանի մասին ունեցած իր բարձր համարումը: Սերովբէ եւս կը ծանօթացնէ Ալիշանի՝ Խրիմեան վարդապետը, գրելով իր անձնական տպաւորութիւնները. «է պատուական անձ, շուշտակ վարդապետ եւ առաքինաղարդ այր, գործունեայ եւ սրտեռանդն, իրբեւ դմերն Վ. Հ. Պետրոս (Մինասեան), այլ առաւել յառաջատես, աւելի փորձառու, այլ սրտի: Զքեղ ողջունեց. կ'ուզէ գրել անդամ (...): Վարադայ վանքը բարոյապէս եւ նիւթապէս նորէն գրեթէ կը հիմնէ, մէջը ունի ժառանգաւորաց դպրոց, տպարան եւ ունի լաւ դիտաւորութիւններ»²¹³: Խրիմեան Հայրիկ Ալիշանի հետ ուղղակի յարաբերութեան մէջ կը մտնէ 1864ին, առանց ծածկելու այն մեծ համարումը՝ զոր ունէր Նահապետին հանդէպ²¹⁴:

7.- Անցողակի կերպով նշենք Ալիշանի մէկ համեստ կեցուածքն ալ, որ մաս կը կազմէ իր անհատականութեան. այդ իր խոնարհ համարումն է՝ իր իսկ վաստակին: Փարիզ երթալէն առաջ, Ս. Ղազարի տպարանին յանձնած էր Լատիսլաւ Բիրքերի քերթուածին դեր-

212. Հիւրմիւզեան Աբրայ, Վենետիկէն, 30 Մարտ 1859, առ Հ. Ղ. Ալիշան, Փարիզ:
213. Սերովբէ Ալիշան, Պոլիսէն, 23 Դեկտ. 1858, առ Հ. Ղ. Ալիշան, Փարիզ: Սերովբէ Ալիշան ալ ունեցած է Խրիմեանի հետ անձնական մտերմութիւն, այնքան որ «Ես Արծիւյն խրատ տուի որ Վասպուրական նահանգին վրայ ստորագրութիւն մը գրէ. բաւական համոզուեցաւ, այլ պէտք է ժամանակ ունենայ իւր Վարադայ վանուց կարգադրութիւններէն» (1 փետր. 1859, առ Հ. Ղ. Ալիշան, Փարիզ):

214. Խրիմեան Հայրիկի այս նամակը ամբողջութեամբ հրատարակուած է. տե՛ս «Բազմավէպ», ՃԻԸ. (1970), թ. 11-12, էջ 312-313:

մաներէնէ կատարած թարգմանութիւնը²¹⁵, որ կը տպագրուէր երկու լեզուներով, ընդամենը 475 էջ: Ալիշանի՝ Փարիզէն դրած նամակներուն մէջ ամենեւին չենք գտնել հետաքրքրութիւն՝ հանդէպ իր գործին, անոր տպագրութեան, աւարտումին...: Եւ ո՛չ միայն այսքան, այլ երբ Հիւրմիւզեան Աբրահայր նոյնիսկ կը գրէ, «Գիտիցես անշուշտ զի տպագրութիւն Ռոտովիեայ աւարտեալ է եւ սպասէ ճակատուն հասանելոյ այսօր, զի տացի ի կազմ եւ յղեսցի որում ընծայեալն է»²¹⁶, Ալիշան արձագանք իսկ չի տար: Քանի մը ամիս ետք, Հիւրմիւզեան Աբրահայր կարծէք կը փորձէ լսել Ալիշանի մէկ արդար գոհունակութեան ձայնը, ու կը գրգռէ զինք ըսելով. «Ռոտովի փառակաղմ յղեցաւ առ կայսրն եւ առ կայսրուհին, նոյնպէս եւ առ Արշիդուքսն եւ Դքսուհին, որ եւ ետ պատասխանի գեղեցիկ, իսկ կայսրն չեւ ես: Թէպէտ չէր յաջող ժամանակս, որպէս ակնարկեցաք ի թղթիս մերում առ կայսրն, թայց թուի ինձ թէ առաւել իմն աղբեցեալ իցէ այն առ նոսա, զի Արշիդուքսն ասէ ի թղթի իւրում. «Soyez persuadé, Monseigneur, que j'apprecie pleinement la conduite si exemplaire sous tous les rapports que ne cesse de tenir la Communauté dont Vous êtes le digne chef»²¹⁷: Դարձեալ լուռ է Ալիշան, գերեզմանական լուրթիւն՝ հանդէպ իր վաստակին, իր արդիւններուն. որովհետեւ այն խոնարհ համոզումն ունի՝ թէ իր ունեցածը Միաբանութեան կը պատկանի, եւ միայն Միաբանութիւնը իրաւունք ունի անով պարծենալու²¹⁸:

ԱԼԻՇԱՆ՝ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆ

1.- Գրագէտ ու գիտուն Ալիշանի կողքին՝ ընթերցողին անհաճոյ պիտի չանցնի անշուշտ դիտել Ալիշանի դէմքը, նոր ակնոցով մըն ալ, այն է՝ տեսնելու զինքը իբր հոգեւորական, ինչ որ անցեալին ընթացքին զանազան անգամներ նշմարելու առիթը ունեցանք: Քիչ ժամանակի մէջ, Ալիշան իբր Վարդապետ՝ կ'առնինքն վարժարանի

215. Սերովբէ Ալիշան Պոլիսէն կը գրէ իր եղբոր. «Այսօր տեսայ Ռոտովի Հաւերդուհիդ. միտք ունիմ հատ մը Աւստրիոյ դեսպան Պր. Օսթրն Բոքէշիին ընծայել, որ իմ դրամաճանաչ բարեկամս է» (30 Յուլիս 1859):

216. Հիւրմիւզեան Աբրայ, Վենետիկէն, 8 Յունիւ. 1859, առ Հ. Ղ. Ալիշան, Փարիզ:

217. Հիւրմիւզեան Աբրայ, Վենետիկէն, 16 Մայիս 1859, առ Հ. Ղ. Ալիշան, Փարիզ:

218. Միտք ակնարկ մը կը գտնենք իր Նուագներու մասին, այն ալ գրած է մղուած համետութեան զգացումներէ: Պոլիսէն, Ալիշանի դասընկերը՝ Հ. Բարսեղ Մարտիրոսեան կարդալով Նուագները, իր դժգոհութիւնը յայտնած է՝ թէ ինչու՞ Ալիշան հրաժարած է Մուսայէն. այդ առիթով՝ Ալիշան կը պատասխանէ. «Վասն քերթուածոց»՝ չհաճիս ընդ հրաժարելն իմ ի Մուսայից. այլ ես կամէի գիտել թէ քանի՞ք հաճեցին ընթեռնուլ զհրատարակեալն» (30 Յուլիս 1858, առ Հ. Բարսեղ Մարտիրոսեան, Պոլիս):

աշակերտներու սիրտն ու հոգին, որոնք զինքը կ'ընտրեն իբր հոգեւոր հայր մը. եւ երբ Ալիշան, ստիպողութեան հարկին տակ, խոստովանահայրութեան համար՝ փափաքողներուն ազատ ընտրութեան կը յանձնէ հարցը, «քառորդ վարժարանիս առ իս դայ»²¹⁹ կ'ըսէ, որոնց թիւը յաջորդաբար կը բազմանայ: Սրտի ցասով կ'անդրադառնայ քաղաքի աղջայիններուն նկատմամբ, վկայելով թէ «չատ գոհ լինէի եթէ զկարեւորագոյն քրիստոնէական պարտան կատարէին. այլ քաւ լիցի դատել զնոսա, միայն զի յայտնի է ցրտութիւն քաղաքիս առ հոգեւորան»²²⁰:

2.- Հ. Ռափայէլ Թրեանցի մահէն քանի մը ամիս ետք, Միաբանութիւնը կ'ունենայ երկրորդ կորուստ մը՝ յանձին Հ. Եսայի Մըղրազեանի, որ երկար տարիներ մնացած էր Հնդկաստան, Պոմպէյ, իրաւործելու համար վարժարանի կտակը, բայց «ոչ կարացեալ տուլալ սատակ տոթոյ տարւոյս՝ սակաւօրեայ հիւանդութեամբ վճարեալ է զաւուրս պանդխտութեան իւրոյ, ընկալեալ զամենայն խորհուրդս եկեղեցւոյ»²²¹: Ի՞նչ հոգիով կ'ընդունի Ալիշան այս ցաւալի լուրը: Հ. Եսայի իր կեանքը զոհած էր Մըղրին համար, Միաբանութեան գործերուն յաջորդութեան համար, յատկապէս Մուրատեան վարժարանի մատակարարական խնդիրներուն համար, «եւ մեք յուսայաք թէ ընդ հուպ դարձցի նա ի Հնդկաց, եւ մինչ չեւ այդր (վենետիկ) հասեալ՝ նախ մեզ հանդիպեսցի յԱնդլիոյ վալով. այլ նա միանգամայն վճարեալ զամենայն ուղեւորութիւն՝ ամփոփեալ է յանդարձ դադարսն. լիցի արդ բարեխօս մեր եւ զօրալիւն հոգեպէս»²²²: Ալիշան միայն գովասանք գրելով չի դոհանար, այլ «կատարեցաք զհոգեւոր պարտս մեր ի նպաստ հոգւոյն, եւ կատարեցաք եւս ի դիմաց վարժարանիս՝ իբրեւ առ երախտաւոր անձն, բաղմամեայ դործակալութեամբն»²²³:

219. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 8 Փետր. 1859, առ Ա. Գ. Հ. Վենետիկ:

220. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 20 Նոյեմբ. 1859, առ Ա. Գ. Հ. Վենետիկ:

221. Հիւրմիւլեան Աբրահայր՝ Վենետիկէն, 29 Օգոստ. 1859, առ Հ. Ղ. Ալիշան, Փարիզ:

222. Ալիշան Հ. Ղ. Յոնդէնպոլոյէն, 9 Սեպտ. 1859, առ Ա. Գ. Հ. Վենետիկ:

223. Անդ: 1859ի Ապրիլին՝ ուրիշ մահ մը եւս կը պատահի, որ թէեւ անմիջական յարաբերութիւն չունի Ալիշանի հետ, սակայն ցոյց կու տայ անոր սրտին զգացումները բարիին եւ հոգեւոր արժէքներու նկատմամբ: Ալիշան կը նկարագրէ գրելով. «Յաւուրս յայտնի, նորոգեցաւ ի թաղիս սուգ մեր լռեալ. դրակիցք մեր եւ մտերիմք Բաղնարեան Հարք վորուին զպարծանս իւրեանց, զայրն արդարեւ պանծալի զՀ. Շուալոք իշխանազն ոռւս, երբեմն զեսպան ի Բարիզ, որ ի քարոզութենէ դարձեալ՝ հնգօրեայ հիւանդութեամբ փոխեցաւ առ Տէր յ'2 ամսոյս, եւ շատ ոք ի պաշտօնէից եւ յազատաց ոռւսաց գտելոց ի քաղաքիս եկին ի պաշտօն յուղարկաւորութեան, եւ հանգուցաւ մօտ մեբումս (Հ. Ռափայէլի): Երկու ամսօք յառաջ հրատարակեալ էր վախճանեալն

3.- Աթէնքի մէջ Լընորման անունով հնագէտ մը վախճանելով, կտակ կ'ընէ եւ իր հարստութիւնը կը յատկացնէ Եկեղեցիներու միութեան գործին, յանձնարարելով որ ամէն շաբաթ պատարագ մը մատուցուի Փարիզի Notre Dame de Victoire եկեղեցիին մէջ: Կտակարար ընկերութիւնը կը խնդրէ Ալիշանէն՝ որ պատարագներու բացումը կատարէ հայկական ծէսով. այնպէս որ 1860ի Յունուար 27ին, Ալիշան կը պատարագէ յիշեալ եկեղեցիին մէջ, «ուր լցեալ էր բաղմութիւն ժողովրդեան. յետ պատարագին՝ Հ. Կակարին, ոռւս Յիսուսեան, խօսեցաւ քարոզ»²²⁴:

4.- 1860ի Մայիս ամսուն Ալիշան կ'ունենայ անակնկալ հիւր մը, Բատրէ Անճէլոյ անունով վեղարաւոր կրօնաւոր մը, որ 22 տարի աշխատած է Ուռհայի առաքելութեան մէջ՝ Հայերու ի նպաստ. դարձած էր Յորանսա, դրամական նպաստ մը հաւաքելու՝ Ուռհայի քրիստոնեաներուն համար, յատկապէս Հայերուն: Որոնք իրենց քրիստոնէական մաքուր հաւատքին համար՝ կը գովուին Ալիշանի առջեւ: Վեղարաւոր վարդապետը Ալիշանէն չի խնդրեր դրամ, այլ՝ հոգեւոր դիրքեր, գրուած հայերէն գիրքերով եւ տաճկական լեզուով: Ալիշան առանց երկար սպասելու, կը բանայ վարդապետին առջեւ ունեցած ամբողջ հարստութիւնը, եւ «որ ինչ գտանէր առ մեզ նորոգ ալտի (ի վենետիկոյ) 12 օրինակ Թէօպէֆաք, 12 Խպտիլիֆէ տափիր մասիխաթլէր, 6 օրինակ վարք Լուսաւորչի. զայսոսիկ ձրի ետու՝ յողորմութիւն, իբրեւ սատար բարւոյ գործոյ, զոր մեզ անկ էր նախ յողորմութիւն, իբրեւ աղագիցք. խնդրէր եւ Աւետարան տաճկերէն, եւ հագործել իբրեւ աղագիցք. խնդրէր եւ Աւետարան տաճկերէն, եւ հաւատացուցանէ զի եթէ սպագրիցեմք փւ առաքիցեմք, 2 կամ 3-000 օրինակ առ օրին գնեսցի անդ, յեղեփիս եւ ի կողմանս Պարբերոյ (...), եւ լինի կրկին շահ աննիւթ եւ նիւթական»²²⁵: Ո՛րքան քրիստոնէական հաւատք եւ աղգասիրութիւն. քանի որ ինք անկարող

զպատմութիւն դարձի իւրոյ եւ զկոչման յուղղափառ հաւատս եւ յուխտ միանձնական, որպէս աղագամբ իմն առ ի վերուստ, գրուած լի աստուածութեամբ, հանգոյն իմն խոստովանութեանց Ս. Օգոստինոսի. մեծաւոր վանաց նոցա ընծայեաց մեզ զօրինակն՝ զոր հեղինակն նոցա ընծայեալ է եւ գրեալ երկոտոյ ի վերայ, յոր եւ ինքն յաւել» (10 Ապրիլ 1859, առ Ա. Գ. Հ. Վենետիկ): Ալիշանի գրեթէ առաջ՝ Հիւրմիւլեան Աբրահայր արդէն տեղեակ էր, որովհետեւ զգման Շուալոքի ընթերցաք ի լրագրի քաղաքիս. աւա՛ղ, զի յոյժ վաղամեռիկ եղեւ այրն պատուական, որում մարթ էր օգուտ բազում առնել Եկեղեցւոյ եւ ընկերութեան իւրոյ եւս» (19 Ապրիլ, 1859, առ Հ. Ղ. Ալիշան): Շուալոքի թաղումէն քանի մը օր ետք՝ Ալիշան կու տայ զգլխիկն օծումն պառաւոյ միոյ 92ամեանի, որ եւ ի նմին գիշերի փոխի առ Տէր, եւ կը յաւելու՝ թէ «վաղիւ հրաւիրեալ եմ ասել պատարագ վասն հանգստեան հոգւոյ» (13 Մայիս 1859, առ Հ. Աբրահամ ձարեան, Վենետիկ):

224. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 31 Յունի. 1860, առ Ա. Գ. Հ. Վենետիկ:

225. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 18 Մայիս 1860, առ Ա. Գ. Հ. Վենետիկ:

օրերը, եւ կ'անդրադառնայ թէ սահած անցած է Ս. Աբրահամի օրը, Ալիշան գիտէ քաղցր կերպով արդարացնել ինքզինքը եւ գեռ աւելի նրբութեամբ արտայայտել սրտին զգացումները՝ գրելով. «մի՛ դարձանար եւ մի՛ կասկածեր ընդ իս՝ եթէ Աբրահամ խոստովանող զայս ամ անազանեաց ի դալ. զի որպէս տեսանեալ՝ ծերացեալ է եւ ընդ անապատ մեծ անցեալ, անապատ տխրութեան եւ դառնաց, որ եւ զաւուրս տօնացուցին շփոթեաց. սակայն սրտի ցուցակ յար ի նմին կայ տեղումը, այլ զոր ոչ ժամանէ բարբառել ի ձայն կամ ի գիր՝ զայն Պաշտպանն քո աղղկեցէ առ յինչն քում սրտի, եւ կեցցես յամայր ի սէր իմ եւ բազում եղբարց եւ մանկաւոր, որք եւ անազան յոյժ լացցեն զգրկումն քո ի կենցաղումս»²³⁴։

Այս եւ ասոնց նման բազմաթիւ մտերիմ բացատրութիւններով նամակներ կը յաղորդեն իրարու, որոնց կրկնութենէն կ'ուզենք խուսափիլ. դժբախտաբար, Ալիշան չէ պահած մեղի Հ. Աբրահամ ձարեանի նամակները, որով կ'անդիտանանք փոխադարձ զգացումներուն մասին. մինչ հակառակ երեւոյթին կը հանդիպինք Բագրատունիի հետ, որուն նամակները յատուկ դուրգուրանքով պահուած են Ալիշանի կողմէ. բայց այս անգամ՝ անոնց պատասխանները անհետացած են մեծ քերթողապետին զիւանէն։

2.— Կանոնաւոր նամակագրութիւն գոյութիւն չունի Ալիշանի եւ Բագրատունիի միջեւ. Ալիշան կը տիրէ միշտ ողջունել զինքը՝ Հ. Աբրահամ ձարեանի ուղղած նամակներուն մէջ, «Քերթողապետն իմ» կոչելով զինքը, «զոր եւ ողջունեմ զնա ուկիանոսաչափ»²³⁵, եւ կամ պարզ ողջոյններ զրկելով «առ Բագրատունին»։ Զանազան առիթներով, հարկը պահանջելուն, ատեղծուած է փոխադարձ նամակներու երթեւեկը. այսպէս, Ալիշան հազիւ Փարիզ ժամանած, կը խնդրէ Բագրատունիէն (Վենետիկ), որ «Հայկ Դիւղազն»ի նորատիպ հատորէն օրինակ մը զրկէ Պոլիս՝ Սերովրէ Ալիշանի²³⁶։ Զ'ուշանար պատասխանը, եւ ի՞նչ պատասխան. «Ո՛վ սիրելի եւ մեծարդոյ Հայր Լեւոնդիոս Ամր, զի Համարձակիմ ասել՝ իմ, զայնքան դանձր՝ միտմ միայնոյ սեփականել. հաս յիս գիրդ՝ յորում գրչուիս իմ սիրէիք, ուր չիք ինչ բնաւ սիրելի. կամէի թէ զսիրտս ասէիք սիրելի, զի է կար եւ պարտ սիրուն զայն առնելոյ, եւ յոյժ երկբայանամ թէ գուցէ ոք այլ սիրապատար, որ եւ ի սիրելն զՔեզ՝ վստահ է ոչ ան-

234. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 18 Դեկտ. 1858, առ Հ. Աբրահամ ձարեան, Վենետիկ։

235. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 22 Մայիս 1858, առ Հ. Աբրահամ ձարեան, Վենետիկ։

236. Սերովրէ Ալիշան ստացած է Հայկ Դիւղազնը եւ քիչ ժամանակի մէջ կարդալով՝ Բագրատունիի հացուցած է իր տպաւորութիւնները եւ գիտողութիւնները, բազմաթիւ էջերու վրայ. օրինակ՝ որ ներկայիս վը պահուի Ս. Ղազարի զիւանը։

պէտ ինչ ծախեալ զաղէտան (...): Առ պատուական եւ իմ սիրելի եղբայրն Զեք՝ անմոռաց փութով տաց առաքել օրինակ մի զՀայկին պատկերադարձ. մի՛ շուշտ ինչ լիցի քեզ բնաւ։ Ընդ դարնանասէրսն եմ քի գիւղս, այլ որ զՄեղովակեայ լուռ ափունսս եւ զմիայնութիւնքս ցանկալի յարգարեւոյն էր՝ ոչ է աստ Լեւոնդիոսն Հայր, որում եմ եւ եղէց ամենանուատտ եղբայր՝ Հ. Արսէն Կ. Բագրատ(ունի)²³⁷։

Երկրորդ առիթ մը կը տեղծէ Բագրատունի, տեղեկանալու համար Ալիշանէն՝ ձեռագրական մանրամասնութիւններ, նկատմամբ Եւսեբիոսի եկեղեցական պատմութեան։ Բագրատունի դարձեալ առիթ կը գտնէ յայտնելու իր մեծ սէրը եւ բարձր համարումը հանդէպ Ալիշանի. «Ինձ յոյժ մեծարոյ եւ սերտիւ Սիրեցեալդ Գլուխ եւ սիրտ Հայր Լեւոնդիէ Սուրբ Վարդապետ. որչափ եւ զուշանամ՝ ոչ միայն լակոն լինել ի գիրս իմ, այլ եւ բնաւ Հյաւելուլ ի ծանր վաստակդ եւ վատնել զպատուական ժամագ (…)²³⁸։

Հ. Ռափայէլի դամբանականը դրած ատեն, երբ Ալիշան կը յիշէ հանդուցեալ վարդապետին դաստիարակները եւ դասատուները, առանց անունը տալու՝ կը յիշէ նաեւ «վարժապետ մ'ալ, որ մեր հրաշարան նախնեաց քերթողութիւնը անման կերպով կենդանացուց, եւ այսօր մեր աղգային մատենադրաց պարագլուխն է»²³⁹։ «Բագրատունի մէջ հրատարակուած ատեն՝ Ալիշանի ձեռագիրը կ'անցնի Բագրատունիի ձեռքը. կը կարգայ ու չափազանց բացայայտ կը գտնէ եղած ակնարկը. «O' Carum Caput (...) ի դամբանականի լուսահոգի հանդուցելոյն մերոյ եղբոր սիրելւոյ, կարի՛ յոյժ թշնամանեալ ես զիս. ներեսցէ՛ եւ Աստուած՝ որպէս եսս. սակայն եւ այնպէս ողջ լիք, սիրեցեալդ զլուխ։ Հոգեկցորդ անձկալից եղբայր՝ Հ. Ա. Կ. Բ.»²⁴⁰։

Տարի մը ամբողջ լռելէ ետք՝ խօսողը դարձեալ Բագրատունիին է. «Ո՛վ Լեւոնդիէ Հայր, հոգւոյ հատոր. եկն Ծնունդ աստուածային, եկին կաղանդք, եկն Յայտնութիւն տէրունական, եւ ես երկցա թռեայ հոգւով Փարիզ գրեւ, եւ դու Տեսանողդ՝ ո՞չ տեսեր զիս այդր յողջունել զիրեարս։ Արդ՝ նոյն Հոգիս բերեալ մատուցանէ զգիրս գրկատարած, եւ մաղթէ Սիրեցելում Գլխոյդ զամենայն բարիս, եւ ինձ զսէր քո։ (...) Սեաւ աչացդ եւ սպիտակ հոգւոյդ եւ սրտիդ՝

237. Բագրատունի Հ. Արսէն՝ Ֆիէսոյէն, 7 Յունիս 1858, առ Հ. Ղ. Ալիշան, Փարիզ։

238. Բագրատունի Հ. Արսէն, Վենետիկէն, 30 Դեկտ. 1858, առ Հ. Ղ. Ալիշան, Փարիզ։

239. «Բագրատունի», ԺԵ. (1859), Թ. 3, էջ 85։

240. Բագրատունի Հ. Արսէն, Վենետիկէն, 28 Փետր. 1859, առ Հ. Ղ. Ալիշան, Փարիզ։ Այս նոյն նամակէն կ'իմանանք թէ Ալիշան Բագրատունիի զրկած է Միլտոնի Կորուստ Դրախտին քերթողաբերին անդիւրէն բնագիրը. Բագրատունի չնորհակալ կ'ըլլայ ըսելով՝ «որով զոչ սակաւ վրկապա առաջնոյն ուղղեմ»։

տրուպ եղբայր Հ. Ա. Կ. Բ.»²⁴¹։ Ի՞նչ եղած է արդեօք Ալիշանի 12 Յունուար 1860 թվականի պատասխանը²⁴², որ Բագրատունի դեռ առաջին ջերմացած է եւ սրտով եւ գրիչով, ու կը գրէ. «Ո՛վ Հոգեկցորդ Եղբայր, ո՛վ Հոգևոյս հատոր, ո՛վ ինձ ճշմարտապէս մեծարոյ Հա՛յր Լեւոնդիէ. յոյժ կարօտիմ տեսոյ քում, կղկաթ կաթողի եմ, եւ ոչ զկենդանադիրդ ի վարժարանին տեսանեմ, զի երեքտասան ամիսք են չեմ ոտն կոխեալ անդր եւ ոչ ի քաղաքն, զի կալ եւ կապ դրադանաց չներեն, թո՛ղ զի եւ կենդանադիրն ոչ յադեցուցանէ զիս, զի զկէսդ ոչ ունի՝ զհոգիդ ասեմ, զաչսդ...»²⁴³։

Կը սպասենք յարմար առիթի՝ լոյս ընծայելու համար ո՛չ թէ միայն երեք տարիներու ընթացքին, այլ բովանդակ թղթակցութիւնը Բագրատունիի առ Հ. Ալիշան, ամբողջական հայեացքն ունենալու համար Բագրատունիի սիրոյն եւ համակրանքին՝ հանդէպ իր «Հոգևոյ հատոր» Ալիշանի։

ՎԵՐԱԴԱՐՁ ԴԵՊԻ ՎԵՆԵՏԻԿ

Ալիշան՝ Փարիզ ոտք դնելէ առաջ՝ զարմանալի նախադրեցումով տեսած էր իրեն յանձնուած առաքելութեան դժուարութիւնները, որոնց ընդ առաջ ելած էր վեհանձնութեամբ եւ զաղափարականով. զինք աշխատանքի մղող հողին՝ կեանքին ընթացքին եղած էր միշտ նոյնը, սէրն Աստուծոյ եւ Հայրենիքին, որով կրնար համարձակ կերպով գրել նաեւ Փարիզի մէջ անցուցած կեանքին համար, թէ «այնու միայն քաղցր է ինձ՝ զի դառն է ըստ բազում գրիսոց»²⁴⁴։

Պատմութեան ընթացքին, տեսանք զանազան անդամներ՝ թէ ինչպէս տարուած փր ընածին զբացումէն, վայրկեան առաջ կ'ուղէր փախչիլ Ս. Ղազար, առանձնանալ «Դիողինէսեան տակառ»ին մէջ, ամփոփուել ծովահայեաց սենեակ մը, եւ քառասնամեայ տարիքի սեմին՝ խոր մտածել կեանքի անցաւորութեան մասին. աչքերուն առջին գործ կը թուէր անցաւոր, կարծէք սրահ մը կ'ուղէր հրաժարել նոյնիսկ աշխարհագրական զբաղումներէն, ձգելով այդ ամէնը «այլու» Հ. Ղեւոնդեայ, իսկ ես համարեցայ զիս նոր եւ վերստին եկեալ յաշխարհ, եթէ աւարտեալ կամ լքեալ Գառաջարկեալ գործ՝ իբրեւ վէժ ի սրտադրանցս թաւալելով, փոքր մի եւս եւ ոճով փնջ խորհեցայ զաշխարհէն՝ յոր միայն անշուշտ եւ աներկբայ գնալոց եմ, եւ որ ինքնին մեծաքայլէ ընդ առաջ ինձ՝ որպէս եւ ամենայն

241. Բագրատունի Հ. Արսէն, Վենետիկէն, 8 Յունիւլ. 1860, առ Հ. Ալիշան, Փարիզ։

242. Ալիշան սովորութիւն ունի ստացած նամակին վրայ նշանակել նոյն նամակին պատասխանած օրուան թուականը։

243. Բագրատունի Հ. Արսէն, Վենետիկէն, 5 Մարտ 1860, առ Հ. Ալիշան, Փարիզ։

244. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 5 Մարտ 1859, առ Գերպ. Եղուարդ Հիւրմիւզ, Հոռոմ։

մարդոյ, եւ մանաւանդ որոց դէմք դարձեալ իցեն յարեմուտս ծերութեան»²⁴⁵։

Երկսայրի սուրի մը դէմ կը տեսնենք Ալիշանը. որքան տարիները յառաջանան (1859–1860–1861), ա՛յնքան աւելի նուիրուած կը գտնենք զինքը – մէկ կողմէն – Մուրատեան վարժարանի տեսչութեան եւ աղոց դաստիարակութեան սրբազան գործին. նուիրումէն անբաժան է նաեւ հակառակ զգացումը. «... յորոց եւ ազատութեան ցանկամ առ փ դիւր խղճի – կը գրէ 1860ի Նոյ. 22ին՝ Գերպ. Հիւրմիւզին – բայց խիթալով այլոց հանդիպել ստանձնելեաց, մնամ ի կամս տեսչութեան Ուխտիս»։

Դէպքերը եւ ժամանակները փոխուելով, Ս. Ղազարի մէջ կը զգացուի պահանջը Ալիշանի ներկայութեան։ Վանքի բարձրագոյն աշակերտութեան Մեծաւորը, Հ. Համազասպ Թերճիմանեան՝ երկարատեան հիւանդ ըլլալով, «այս երկիցս է զի արիւն թքանէ (սէն), հաստատեցաք եւ եւս ի միւս մեր խորհուրդ վաղագոյն դաւաճանդ ախր», կը գրէ Աբբահայրը, 21 Մայիսին (1861)²⁴⁶։ Ալիշան հասկըցած էր Աբբահայր փափաքը. բայց թէ այս նոր հրամանը իր վրայ ինչ ապաւորութիւն թողուցած է՝ չենք գիտեր, որովհետեւ նոյն այդ նամակին կը պատասխանէ՝ առանց անդրադառնալու իրեն յանձնուելիք նոր պաշտօնին։ Իսկ Գերպ. Եղուարդ Հիւրմիւզին կը գրէ միայն «թուի թէ եւ զիս փոխադրելոց են ի վանս»²⁴⁷։

Այս առաջին ապաւորութիւններէն ետք, Հիւրմիւզեան Աբբահայր՝ Ալիշանի հրաւերին վրայ՝ կ'ուղղուի Փարիզ, նախազահելու համար 1860–1861 ուսումնական տարուան փակման հանդէսին։ Աբբահայրը Փարիզ կը մնայ շուրջ ամիս մը (6 Օգոստ. – 2 Սեպտ.), ուր անշուշտ խօսած պիտի ըլլան մտերմաբար՝ միաբանական հարցերու եւ Ալիշանի ստանձնելիք նոր պաշտօնին մասին։ Որոշ է, սակայն, որ Աբբահայրը վճռական քայլ չէ առած՝ Փարիզի մէջ. սակայն, Վենետիկ դառնալուն, 15 Սեպտ.ին, Ալիշանի կը հաղորդէ Միաբանութեան կամքը գրելով. «սահմանեցաւ Հ. Օքսենտիոս կալ առ այժմ որպէս փոխանորդ տեսչի (...). իսկ վերապատուելիութեանդ՝ դառնալ այսրէն, քանզի Հ. Համազասպայ տկարութիւնն

245. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 12 Յունիւլ. 1860, առ Հ. Ներսէս Սարգիսեան, Վենետիկ։

246. Բացի վերակացութեան պաշտօնէն՝ Աբբահայրը վաղուց փափաքած էր կանչել Ալիշանը Ս. Ղազար, մտահոգուելով անոր առողջական վիճակով, չուզելով որ աւելնան անոր վրայ «նոր հոգա եւ դժուարութիւնս, զի մի՛ վտանգեացի յանկարծ եւ քո առողջութիւնդ որ պատուական եւ կարեւոր է մեզ յոյժ յոյժ» (8 Յունիս 1861)։

247. Ալիշան Հ. Ղ. Փարիզէն, 1 Յունիս 1861ին, առ Գերպ. Եղուարդ Հիւրմիւզ, Հոռոմ։

ոչ թեթեւ ինչ է, եւ բժիշկը արգելին զնա ի խօսելոյ եւ ի մտաւոր աշխատութենէ»:

Արքահօր եւ ամբողջ վարչական կազմին կամքը յստակ է. Ալիշան կը կանչուի Ս. Ղազար, շարունակելու Հ. Համադասապի պաշտօնը, ըլլալ որպէս հոգեւոր առաջնորդ՝ քահանայութեան պատրաստութեամբ երիտասարդներուն, թիւով չորս տասնեակ մը. պաշտօն՝ որ արտաքսապէս դիւրին կարծուելով հանդերձ՝ իր հետ պիտի բերէր ծանր պատասխանատուութիւններ, աւելի քան նիւթական մատակարարութիւնը՝ իր հազարումէկ դժուարութիւններով: Այս ամէնը շատ լաւ գիտէ Ալիշան, այնքան որ 24 Սեպտ.ին Արքահօր պատասխանած ատեն՝ ինք իրեն կը մղթէ «համբերութիւն եւ կարողութիւն՝ աղօթութիւն Զերովք, զի յոյժ ծանր երեւի անդէն եւ անդ ընդ թողուլ ըզտեղիս դայս եւ զհանգամանս՝ մտանել յայն դործ, մինչ չեւ պարաստութեալ եւ անդորր՝ զլիսոյ եւ սրտի»:

Կեանքի փոփոխութիւնը, չորս տարիներ փարիզ անցուցած կեանքը՝ կրնանք ըսել նպաստած էին Ալիշանի առողջութեանը, որ աւարակաբար ըլլալով հանդերձ՝ ամենեւին չէր հիւանդացած: Արդեօք պաշտօնի նոր փոփոխութիւնը պիտի վնասէր Ալիշանի առողջութեան, որ նիւթականէն կ'անցնէր հոգեւոր եւ մտային աշխատանքի: Կացութեան տեղեակ է Հիւրմիւլեան Արքահայր, որ 24 Սեպտ.ին պատասխանելով Ալիշանի նամակին, հայրաբար կը քաջալերէ զինքը, ըսելով թէ երկար պիտի չտեւէ վերակացութեան պաշտօնը. «գիտեմ զի եւ քոյդ առողջութիւն չէ յոյժ զօրաստը եւ վասն այնորիկ տրոփէ սիրտ իմ եւ չկամիմ թէ հոգած սրտիւ եկեսցես այսր ի պաշտօնն սահմանալ (...), ոչ յոյժ երկարեսցես փ նմին, վասն որոյ քաջալերեաց»:

Ամէն բան որոշուած է. Ալիշան անդամ մը որ դրած է «ծանեայ զսահման ժողովոյդ վասն իմոյ դարձիս եւ արարից այնպէս», կը պատրաստուի ճամբայ ելլելու. ամիս մը եւս պէտք է մնայ Փարիզ, իրեն յաջորդող Հ. Օքսենտրոս Գուրգէնեանին փոխանցելու համար պաշտօնը: Գիտէ Ալիշան թէ իր ներկայութիւնը Ս. Ղազարի մէջ անհրաժեշտ է, եւ պէտք է կրցածին չափ արագ վազէ՝ լեցնելու համար Հ. Համադասապի թողած պարասը: Պոլիսէն Սերովբէ Ալիշան, անտեղեակ կացութեան եւ մանրամասնութիւններուն, կ'առաջարկէ եղբոր «փախուստ մը առ մեզ չե՞ս կրնար յարմարեցունել, վաքանս մըն ալ առ հայրենիս եւ յընտանիս առնել եւ յետոյ վերադառնալ ի վանս (...), մանաւանդ եկո՛ւ որ քիչ մը չորցած սրտերնիս քիչ մը հոս վանայ, զովանայ, եւ ետքը աւելի կազդուրեալ ետ կը դառնաս եւ սա մնացեալ կենաց չըջանիս ալ քաջութեամբ կ'աւարտենք: (...) Ըրած առաջարկութիւնս խորհէ եւ զործադրէ, Courage, mon ami, la vie s'en va. կենդանադրիդ տակ դրած եմ խաւրած տերեւդ, որ

դեղնեցաւ եւ ուր կ'ըսես ի սաղմոսէ. Մարդոյ որպէս խոտոյ եմ աւարք իւր»²⁴⁸:

Ալիշան պատրաստ է մեկնելու. փարիզէն վերջին նամակը դրած է Գեւրգ. Եղ. Հիւրմիւլեան, 31 Հոկտ. 1861 թուականով, որ Հոռմ կը տանի Ալիշանի երախտադիտական զգացումները. «յառաջ եւ յետ մեկնելոյս, ոչ գիտեմ ո՞րքան եւ ո՞րչափ շնորհ ունիմ ամենայն սիրոյ, վաստակոց եւ մեծարանաց՝ զոր յընթացս ամաց պանդխտութեանս աստանօր ցուցէք ինձ եւ իմոցս, որոց փոխարէն սէր եւ շնորհակալիք եւ յարգութիւն առ յինչն՝ կենօք չափ, իսկ առ ի կենսատուէն՝ յաւիտենից չափ»:

«3 Նոյեմբեր 1861. դարձ ի Վենետիկ: Ի միջօրէ եւ կէս չու ի վարժարանէս, հրաժեշտ ի 28 աշակերտաց. սրտառու է եւ սիրապատար անջատումն ի մանրկանց սիրելեաց»²⁴⁹: Ալիշանի օրագրութեան

248. Սերովբէ Ալիշան, Պոլիսէն, 10 Սեպտ. 1861, առ Հ. Ղ. Ալիշան, փարիզ:
249. Անոնց համար՝ որ կը հետաքրքրին Ալիշանի փարիզ-Վենետիկ կատարած ճամբորդութեան մանրամասնութիւններով, հոս քաղուածաբար կու տանք մանրամասնութիւններ, առնելով իր Օրագրութեան տետրակէն.

«1861 Նոյեմբ. 3 (...) ուղեկից ունիմ զՄիլոտի Հիմոնճեան. ի չուարան չողեկառաց՝ Գարեգին Պէշիկ: Մեկնիմք փ Բարիզոյ 13/4 յետ միջօրէի:

«4 Նոյեմբ. 3 ժամ առաւօտու ի Մազոն, ուր սպասեցաք ց'6 ժամ: Ապա դարձեալ չողեկառօք ի 12 1/2 միջօրէի ի Գենեւ, ի պանդոկ Վիկտորիա, որ ի փողոցն Mont Blanc, ի սենեակ 22: Իբր կ'իստաժամու մերձ դուրս ի Գենեւ, տեսիլ Սպիտակ Լերին սպիտակատարած լայնադիր՝ ի թիկանց այլ Գենեւ, տեսիլ Սպիտակ Լերին սպիտակատարած լայնադիր՝ ի թիկանց այլ Գենեւ: Ծրճադայութիւն ի Հասարակաց դրատան. չիք հայ ձեռագիր: Ծեւական Մուգէոն, բնական պատմութեանն, ի սուրբ Պետրոս կաթողիկէ՝ որ այժմ է ի ձեռս կալլինականաց: Մահարձան տապան Ենրիկեայ զօրավարի: Անդ. պարտէզ Metropole պանդոկի, յորում փայտեայ ձեւակերպ մեծ Սպիտակ Լերին (relief):

«5 Նոյեմբ. կամելով չողեկառու մեկնել յ'9 ժամու՝ մնացաք, առ սխալ տեղեկութեան, ց'մի ժամ յետ միջօրէի: Musée-Rath պատկերաց թանգարան եւ անդրեաց, դաճեայ դադափարք հրաշալեաց վատիկանի, քարաքանդակ դադափար դրան մկրտարանի Փլորենտիոյ: Notre Dame նորակառոյց եկեղեցի ուղղափառաց: 1 ժամ չողեկառու մեկնիմք երթալ Պուվրէ եւ անտի չողեկառօք ի Սիոն: Գեղեցիկ տեսարան սաւոյական ափանց լճին՝ զորով քերեմք. Սպիտակ լեռն երեւի լայնադուրս ի բացուածոյ այլոց լեռանց: Ի 5 ժամու Պուվրէ, ուստի չողեկառօք ի Սիոն: 8 1/2 Սիոն, ուր դադար 2 ժամ: 10 1/2 երեկոյան ձեպընթացիւ չու ի Պրիկ:

«6 Նոյեմբ. 5 ժամ առաւօտու ի Պրիկ. դադար 2 ժամ: 7 ժամու սկիզբն վերելից ի Սեմբլոն. հետի՝ մինչ ի ց'ր ապաւինարան, կառօք՝ մերձ յ'գն, դարձեալ հետի՝ ց'դ: Զիւն դաշտի, հողմն սուր եւ ձիւնամաղ. օդ պայծառ, լերինք չըջապատեալ ձիւնապիտակք. վիհք եւ կիրճք ահաւորք. յերբորդ ապաւինարանէն ցէջս ի Սեմբլոն դադարական բալխիրս. ի չորբորդ ցկատար լերինն ելաք բալխրաւ: Ի 1 ժամ ի հիւրանոցն Օգոստինեանց, ծընդափ խրելով ի ձիւն. տեսութիւն ձեպով եւ արգանակ ի վեր: Զիւնն ընդ դար եւ թիւր ցնցամբ բալխրի, Միլոտին զդուեալ փսխէ. զգացի եւ ես ստամոքսաւորութիւն: Զիւնն Սեմբլոնի դարձանել Միլոտի. հանգչի: 5 ժամու

նէն քաղուած այս քանի մը բառերը ամէն ընթերցողի կը մատնանշեն խոր յուզում և սէր. դարձեալ բաժանում և անջատում, տանելով իր հետ սիրտ մը վիրաւոր, թողլով որ զերբնական շարժառիթներ՝ խառնուած ժամանակին՝ սպեղանի ըլլան հայրական վիրաւոր սրտին:

Ալիշան կը փակէ կեանքի սլաւոմութեան վշ մը, ուր արձանագրած է յաղթանակներու շարք մը, յաղթանակներ՝ ո՛չ առանց ցաւի եւ նեղութեան, որոնց հրահրիչ ոյժը եւ կենդանացնողը եղած էին իր անդերադանց աստուածսիրութիւնը եւ աշխարհածանօթ ազգասիրութիւնը:

Կը թողու Փարիզը եւ կը հեռանայ, մտքով ու սրտով դարձեալ ստէպ դառնալու համար հոն ձգած անմեղներուն, որոնց կը զրէ զանազան նամակներ. ու թէեւ ատոնք հրատարակուած եւ վերահրատարակուած են, սակայն կ'ողբենք մէջքերել անոնցմէ դոնէ հատ մը՝ մեր այս խորհրդածոթիւններուն վերջակէտ դնելէ առաջ:

Ս. Ղազար, 28 Դեկտ. 1861

Իմ Սիրունք Սանունք Մանունք,

Շնորհաւոր Նոր Տարի:

Զեռաց ձրիկները թողլով ուրիշներուն տալ ձեզի, միայն սըրտանց եւ լի սրտանց մաղթեմ ամէնուրեք եւ ամէն մէկներնուդ՝ մտած տարինիդ շնորհալի ըլլայ, եւ լի շնորհօք ելլալ անկէ, ուրիշ շնորհաւոր տարւոյ եւ տարիներու մտնելու:

Ի Զեյա, ուր մաքսաքնութիւն: 7 ժ. Ի Տոմոյոտոսուայ, ուր կացար ց'10½:

«7 Նոյեմբեր. 4½ Արոնա, ուստի շոգեկառօք Ի 6¼ Նովարա - Շրջագայութիւն. Եկեղեցի Ս. Գաւռնիդ, հոյակապ, զորոյ շինէին զարմանալի դմբէթ աշտարակաձեւ սիւնարդոր: Գնացար ցկեղրոն քաղաքին Նովարայ, որպէս եւ զրեալ էր յարձանի, եւ երէց մի հանդիպեալ պատմէր զդէպսն ականատես դուրս: 9¼ մեկնեալ՝ հասար Ի Միլան 10¾. Իջաք առ Բառնարեանս: Յետ ճաշու՝ Ի ճեմարանն Պրերա, ուր դտաք զճանուի, ընդ որում չըջեալ Ի տես պատկերաց, ապա Ի տունն նորա: Կամար խաղաղութեան: - Առ անուանեալ իշխանն Լիւդինեան, որ դեռ յայագրէր զանցս իւր եւ զնամականին: Առ Եղարս Ս. Յովհաննու Աստուծոյ:

«8 Նոյեմբեր. Պատարագ Ի Ս. Բառնարաս: Ընդ միոյ Ի Բառնարեանց՝ Ի Ս. Կարոլոս Ի կաթողիկէն. տեսաք զգանձա զարծաթից սպաս եւ անդրիս սրբոց եւն: Ելաք Ի դմբէթն: Ի Ս. Ամբրոսիոս: Ամբրոսեան մատենադարան: Առ Բարերար Նիքարս, ուր տեսի զԺանօթս իմ՝ Նաբբի, ձիրողամոյ, Սերվոլոյ եւն: Փոխադրութիւն արկեղ յիջեանէ երկաթուղոյն Ի միւսն:

«9 Նոյեմբեր. 6½ առաւօտուն մեկնեալ Ի Միլանէ, ընդ Բեսքերա Ի Պատարիոն Ի 4½ երեկոյի:

«10 Նոյեմբեր. Պատարագ Ի Ս. Անտոն: Շրջագայութիւն: Առ Ազանուրեանս: Խոստով. առ Վեղարաւորան:

«11 Նոյեմբեր. Ի 10 ժամու առաւօտուն մեկնեալ Ի Պատուայէ, Ի 12 ժ. Ի վանս, յաւուր ծննդոց Վեհի, ուր եւ Ռաֆայէլեան վարժարանայքն:

Անշուշտ այս նոր տարին ալ հասակնիդ քանի մը մատ պիտի երկընցնէ (թէպէտ Պ. Խորասանճիին բաւական է արդէն), բայց մըտքերնիդ քանի՞ կանգուն պիտի երկընայ եւ լայնայ, սիրտն ո՞րչափ աւելի պիտի բարակնայ, հոգին ո՞րչափ աւելի պիտի բարձրանայ:

Անշուշտ հիմա ցուրտ է (կեցած սենեկնիդ չէ), ձմեռ է. այս տարի ալ ունի իր ձիւնը եւ բուքը, իր փոթորիկն եւ մրրիկները. բայց վարուն այլ ունի, թռչուն այլ ունի, ծաղիկ եւ պտղիկ այլ ունի: Հովերուն հեռուէն լսեցէք, ծաղիկը մօտէն քաղեցէք (միայն՝ փշոտ չըլլայ), սրտուղը ատենին վայելեցէք: Կ'լմանա՞ք, ...ատ, ...ան, ...ոն, ...ճի, ...եւ ճի:

Վաղը նորէն փեթակը կու քացուի (դասատունն), աշխատեցէ՛ք, ջանացէ՛ք, շահեցէ՛ք. այս է ամէնուս պարտքն:

Ողջունեցէ՛ք ամէն Վ. Վարդապետները, Եղ. Յովսէփը, Մ. Տամէն եւ միւս վարժապետները, եւ ողջ ու զուարթ եղէ՛ք միշտ յանուշահոտ անմեղութեան, որոյ յուսով մնամ՝

Աղօթարար

Հ. ՂԵՒՈՆԻ Մ. ԱԼԻՇԱՆԵԱՆ

Ո(քղեգիր) Կ(ուսիմ)

ՎԵՐՋԱԲԱՆ

Ալիշանի ամբողջ սիրտն ու հոգին, անոր վեհանձն ու խանդավառ սէրը կը մխան այս տողերէն, ուր նրբին եւ մտերմական զգացումներու հետ՝ փափկօրէն ձուլուած են ջերմազին ու հակիրճ մաղթանքներ, որոնց ետեւ կենդանի կը մնան հարազատ դաստիարակին անմար մտահոգութիւնները՝ իր երբեմնի սաներուն ասպագային երազով կախարդուած, անոնց ֆիզիքական, մտաւորական եւ հոգեկան յառաջադիմութիւններուն զուգընթաց տենչով առջցուն:

Խոնարհ վանականի համեստ գրիչէն սահած սա քանի մը տողերուն տակ ծածկուած է Ալիշանի ամբողջ մարդկային կերպարը, զերբնականին տեսիլքներով ոգեղինացած, բոլորանուէր զոհողութեան եւ ինքնամոռացումի քողին տակ անօտարացած, որպէս իսկական տիպար՝ երկիւղած եւ աստուածանուէր հոգեւորականի, ազգասէր վանականի ու մանաւանդ հայրադորով դաստիարակի. սքանչելի տիպար ու պատկեր՝ զոր ջանացինք քաղաղերժել մեր այս տողերուն մէջ, Ալիշանի Փարիզեան օրերու վերյիշումներով:

(Վերջ)

Հ. ՍԱՀԱԿ ՃԵՄՃԵՄԵԱՆ

Résumé

P. LEVOND ALISHAN

DIRECTEUR DU COLLÈGE ARMÉNIEN SAMUEL-MOORAT
DE PARIS

(Suite, v. «Bazmavep» 1978, Nos 3-4, pp. 381-410)

(P. SAHAK DJEMDJEMIAN)

L'Auteur continue, utilisant toujours les notes journalières d'Alishan et surtout sa riche correspondance, à décrire son activité de directeur et d'administrateur du Collège Arménien de Paris, dirigé par les Pères Mekhitaristes de Venise.

Il reprend d'abord le récit par la description des restaurations faites dans les années 1858-1861: installation du chauffage dans l'oratoire et dans la salle à manger, sistémation d'une nouvelle infirmerie et d'une salle de dessin, réparation de la tapisserie du dortoir et des toits du bâtiment, fabrication des vitraux de St. Grégoire l'Illuminateur et de la S.te Hripsimé, dessin du jardin avec un beau bassin, selon le goût romantique, etc... etc...

Dans un chapitre à part, l'A. examine la vie littéraire d'Alishan à Paris, en soulignant ses études sur les manuscrits arméniens de la Bibliothèque Nationale et l'approfondissement de ses recherches historico-géographiques autour de la Grande Arménie, avec des projets pour l'avenir; il parle ensuite des relations culturelles d'Alishan avec Victor Langlois, insigne arménologue et orientaliste érudit français; ainsi qu'avec des éditeurs arméniens, comme Karapet Chahnazarian et Oskanian, et même avec le futur Katholikos des Arméniens, le poète Khrimian Hayrik, tandis que celui-ci était Supérieur au monastère arménien de Varag, près du lac de Van.

L'A. met également en relief l'intimité d'Alishan avec son frère Séropé, personne érudite lui aussi et qui habitait à Constantinople.

L'A. nous propose ensuite, à côté du savant et du grand pédagogue ou écrivain, l'aspect religieux d'Alishan, en soulignant des criconstances qui manifestent la profonde foi et la spiritualité d'un vrai moine, homme de prière, plein de zèle apostolique et d'amour pour les âmes.

Dans le dernier chapitre, l'A. nous présente Alishan dans ses relations intimes avec ses confrères de St. Lazare, surtout avec le P. Abraham Djarian, son frère spirituel de la même classe, et avec le P. Arsën Bagratouni, son grand maître spirituel dans l'art poétique et littéraire, vers lequel il manifeste toujours une profonde adoration, une sincère admiration et un respect filial.

L'étude se termine par la chronologie du voyage de retour, de Paris à Venise, où Alishan arrive le 11 Novembre 1861, répondant à un ordre reçu de ses Supérieurs, qui l'invitaient à St. Lazare, pur remplacer un confrère décédé, dans le rôle d'éducateur et de directeur spirituel des jeunes moines du Monastère.

ԱՆԴԱՐՁ ՄԵԿՆՈՂՆԵՐՈՒՆ

Հ. ԽԱՀԱՏՈՒՐ ՎՐԴ. ՎՐԹԱՆԷՍԵԱՆ

(1902 - 1976)

Ամբողջ յիսնամեակ մը, ամբողջ կեանք մը՝ համակ նուիրում հայ պատանիներու դաստիարակութեան, վենետիկէն փարիզ ու մինչեւ հեռաւոր Պուէնոս Այրէս, անբասիր գործունէութեամբ ու քահանայական շնորհներով օծուն, շինարար արդիւններով պտղաւէտ:

Ահա՛ Հ. Խաչատուր Վրդ. Վրթանէսեանի, ամէնու շատ սիրելի՝ Մխիթարեան շիկահեր Վարդապետին կեանքը, որ պսակուեցաւ իր քահանայական ու կրթական գործունէութեան ոսկեղէն յորեկանի ռաջ, Պուէնոս Այրէս, իր ազգականներու եւ մտերիմ հոգեկիցներու մխիթարական շրջանակին մէջ, հարիւրաւոր աշակերտներու ներկայութեան:

Առողջութեամբ ի բնէ տկարակաղմ, այս վերջին տարիներու հետզհետէ միշտ աւելի ուժասպառ, առաջացած տարիքին պատճառով եւ շաքարախտէն հիւծած, վերջերս գրեթէ անկարող դարձած էր նոյնիսկ քալելու: Թէեւ Մեծաւորները հրաւիրած էին զինք վենետիկ, հանգչելու եւ կազդուրուելու համար, ազատ ընելով զինք ամէն տեսակ պաշտօնէ ու պատասխանատուութիւններէ, սակայն բըժիշկները չէին թոյլատրած երկար ճամբորդութիւն մը մինչեւ Իտալիա: Ու Հ. Խաչատուր Վրդ. Ենթարկուած տեւական խնամքներու, իր սիրելիներու գուրգուրոտ հոգածութեան տակ կ'ապրէր: Կ'երեւի թէ ինքն ալ մինչեւ վերջին շունչը կ'ուզէր մնալ պարտականութեան պատնէշին վրայ ու այնպէս բաժնուիլ այս աշխարհէն:

1976ի Յունուարի վերջին օրը կը հասնէր գոյժը Պուէնոս Այրէսէն, մեծ վիշտ պատճառելով Մխիթարեան քոլոր Հայրերուն, որոնք աղօթքներով ու պատարագով, ինչպէս առօրեութիւն է, Աստուծոյ կը յանձնէին այս բարի ու հաւատարիմ Վարդապետին հոգին, եւ անոր յիշատակն ու օրինակը՝ կտակ ապագայ սերունդներուն: